

Հակոբ Քյոսեյան

ԽՈՐԵՆԱՑԻՆ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՍԲ

**Գրագետ, գեղագետ, բաղդատել, նկարագծել, ճշմարտություն,
գրականագիտություն» սկզբունքներ, դասականություն, փոխառնչակցում,
գաղափարամտություն, հելլենասիրություն**

Արևմտահայ գրական-քննադատական մտքի լուսավայլ փաղանգի մեջ ուրույն և ինքնահատուկ է այն գաղափարական տարազն ու շարժոնը (մոտիվ), որով մեզ է ներկայանում Ա.Չոպանյան նրբամիտ ու ազնվաճաշակ գեղեցկագետը: Գրականագիտական ակնարկներում տիրականորեն ներկա գեղեցկագետը, հոգու ընդերքում միշտ պահելով բանաստեղծաշունչ խառնվածքի ներքին բոցը, ստեպ առ ստեպ իր տեղը զիջում է մարդասեր բարոյագետին: Գերազանց վկայությունն այն բանի, թե որպիսի շնորհալիությամբ է նրա դավանած գեղագիտական սկզբունքը միախլուսվում ներույժ և ներգործուն բարոյագիտական հայացքին «Գրագետն ու մարդը Մովսես Խորենացիին մէջ» հոդվածն է¹: Հենց սկզբում Չոպանյանն ընդգծում է Խորենացուն «իբր գրագետ և իբր մարդ, անհատական նկարագիր» ուսումնասիրելու անհրաժեշտությունը (էջ 1): Ներայացնում Խորենացու և նրա «Հայոց պատմութիւն» աշխատությունն ուսումնասիրող այն բոլոր հայկաբանների բանասիրական նեղ հետազոտությունները, և ցավով նշում, թե ոչ ոք հարկավոր չի սեպել գեղարվեստագետի հայեցակետից քննել հեղինակին և նրա գործը, որ չի սահմանափակվում միայն «Պատմությամբ»: Խոսքի շեշտը դառնում է մեղադրական ու եպերուն, երբ վերաբերում է այն հեղինակներին, որոնց կծու արհամարհանքը Խորենացու նկատմամբ «այդ մեծ գրագետին, այդ մեծ հայրենասերին եւ ազնիւ ու լուրջ մարդուն հանդէպ յարգանքի եւ երախտագիտութեան պարտքին դէմ մեղանշումի» է հասնում» (էջ 3): Հոդվածում գնահատելին ոչ միայն և ոչ այնքան հեղինակի լայնահայաց վերաբերմունքն է Խորենացու շուրջ ծագած բանասիրական խուժադուժ ու իրարամերժ հետախուզումների, այլև դրանց նկատմամբ իր բռնած դիրքի ու որդեգրած գրականագիտական սկզբունքի, թող որ զգուշավոր, անվերապահությունը և օրինակելի չափավորությունը: Սակայն հանուն ճշմարտության հարկ է խոստովանել, որ այն երբեմն տեղի է տալիս զեղումնառատ գնահատումին, որ հատուկ է եղել պերճաբան մտավորականի գրչին առհասարակ (էջ 3):

Ինչպես վերն ասվեց, Չոպանյանը ցավով է արձանագրում այն իրողությունը, որ Խորենացիով զբաղվող ոչ մեկը երբեք անհրաժեշտ չի համարել գոնե ուրվագծելու Քերթոդահոր «Պատմության» գրական-գեղարվեստական արժանիքը և հատկապես նրա մյուս երկերի բանաստեղծական անուրանալի շնորհները, որոնց համակող,

¹ Տես «Անահիտ հանդես մտածման եւ արուեստի, Գ տարի թիւ 1-2, նոր շրջան, սեպտ.- դեկտ., 1931, էջ 1-11(հղումները կտրվեն տեքստում):

ամենակաշառ գեղեցկությամբ օծուն արտահայտությունները «Վարդավառի ճառի», «Հոգեաց վանքի Տիրամոր պատկերի պատմության», «Հռիփսիմյանց պատմության» և «Հռիփսիմյանց ճառի» դրվագներն ու խորախորհուրդ շարականներն են (էջ 9):¹ Նշում է Մ.Աբեղյանի և Ա.Հարությունյանի աշխատակցությամբ 1913 թ. Տփղիսում լույս տեսած «Խորենացիի Պատմութեան քննական հրատարակութիւնը», Գառնիկ Ֆնտզլյանի հայտնի ուսումնասիրությունը², որ «Կորին եւ իւր բանաբաղները» շարքը³ հանրագումարի բերող աշխատություն է , Նորայր Բյուզանդացու 1898-1899 թթ. «Մշակում» ունեցած մեծարժեք հոդվածները, Մանուկ Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները Խորենացու Պատմութեան մէջ» (Վաղարշապատ, 1899), և Ներսես Ալիմյանի մեծ աղմուկ հանած և սկզբնապես «Ամահիտ»-ի ու «Հանդես ամսօրեայ»-ի մեջ հրատարակված «Ղեւնոդ երեց և Մովսէս Խորենացի» աշխատությունը (Վիեննա, 1930), ինչպես նաև «Ամահիտ»-ի նույն համարում զետեղված (1931, թիւ 3-4) Աբրահամ Զամինյանի «Մովսէս Խորենացին, իր ժամանակը, ընկերակիցներն ու գործերը» (էջ 117-136) հոդվածը, որը, չնայած, ի տարբերություն մատրդների, կարելիի սահմաններում ընդգծված գրականագիտական բնույթ է կրում), ինչպես 1914 թ. Ն.Նախիջևանում հրատարակված «Հայ գրականութեան պատմութիւն» աշխատությունը⁴, այնուամենայնիվ իր հետապնդած նպատակով՝ բանասիրական է: Չոպանյանը շեշտում է Խորենացու «գրական, գեղեցկագիտական, հոգեբանական» վերլուծման անհրաժեշտությունը (էջ 3) և ինքզինքը հանձնարարում զաղվելու նմանօրինակ մի աշխատանքով, որի առաջին փորձը նա տվել էր տակավին 1905 թ. «Ամահիտ»-ում հրապարակած մի հոդվածով («Կայծ մը», էջ 22-29) :

Հետ այնու գրականագիտական նժարին դնելով Խորենացու և Եղիշեի «մտայնութիւնն ու ոգին» միանգամայն հետաքրքիր և շահեկան բաղդատում է կատարում, որով եթե Եղիշեն «քրիստոնեական ջերմեռանդութեան և Քրիստոսի համար անձնագոհ դիւցազնութեան երգիչն է, ապա Խորենացին աշխարհական հայրենիքին հելլեն ըմբռնումին քարոզիչն է («Ամահիտ», 1931, թիւ 3-4, էջ 5) և գտնում, որ Եղիշեի լեզուն «առանց Եգնիկի զուտ ոսկեդարեան բարբառն ըլլալու, աւելի մոտ է ոսկեդարեան լեզուին, քան Խորենացիի, որ պերճ, կուռ, ճկուն, փայլուն է...» (անդ, էջ 5), որով ձգտում է բացատրել նրա՝ հունաբան դպրոցի ներկայացուցիչ լինելը:

¹ Բանասիրական միտքը ժամանակի ընթացքում պարզեց (տես Կ.Պ.Անանեան, Մովսէս Քերթոզահայր եւ Մովսէս Խորենացի , «Բագմավէպ» ,1991, թիւ 1-2, էջ 7-25), որ Խորենացու անունով հրատարակված «Վարդավառի» , «Հռիփսիմյանց» ճառերի իրական հեղինակը 7-րդ դարի մատենագիր Մովսէս Քերթոզն է /տպ. «Սրբոյ իօրն մերոյ Մովսէսի Խորենացույ մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 304-325, 326-338, նաև «Մատենագիրք հայոց», հտ. է, Անթիլիաս, 2007, էջ 715-719, 720-735, անդ, հտ.Դ, Անթիլիաս, 2005, էջ 429-436):

² Տես Գ.Ֆնտզլեան, Կորին, Վարք Մաշտոցի, Երուսաղէմ, 1930:

³ Տես Գ.Ֆնտզլեան (Փառնակ), Մաշթոց վարդապետ՝ գոիչ այբուբենքի, «Ամահիտ» ,1905, թիւ 4-5, 10-12, Նկատողութիւններ Մաշթոց-Մեսրոպ վանուան եւ Կորեան բնագրի եւ ժամանակի մասին , «Հանդես ամսօրեայ» ,1926, էջ 268-275, ինչպես և մի փոքր ուշ լույս տեսած ուսումնասիրություն- հոդվածաշարը՝ «Կորին եւ Խորենացի» , «Ամահիտ» , 1930 , թիւ 2, էջ 48-53, թիւ 4, էջ 62-74, 1931, թիւ 5, էջ 58-69:

⁴ Այս մասին տես՝ Մ.Ավդալբեկյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, Եր.,1971, էջ 15:

Համառոտիվ խոսելով «Պիտոյից գրքի» և «Վարք Ալեքսանդրի» թարգմանությունների մասին՝ գրականագետն ընդգծում է նյութի (հատկապես առաջինի) բանասիրական-տեքստաբանական քննության հարկավորությունն ու մեծագույն պետքը, որով հնարավոր կդառնար երևան բերել «յոյն բնագիրը կամ բնատիպարը, որմէ թարգմանութիւն կամ որուն հետևողութիւնն է, այնքան ճոխ ու ներդաշնակ լեզվով մը հայացված այդ» հռետորական արվեստի «թանկագին դասագիրքը... որուն հայացումը ապահովապես խորենացւոյն կը պարտինք» (անդ, էջ 6)¹:

Չոպանյանը տասը կետերով նկարագծում է խորենացու հոգևոր-բարոյական դիմապատկերի հատկանշական մանրամասները: Բնորոշ է առաջին կետի սկիզբը, որտեղ գրականագետը իրատես, ներհուն հայացքով խորենացուն համարում է «ջերմ ու գիտակից քրիստոնեայ հաւատացեալ մը և Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեան հմուտ և հարազատ քարոզիչ»², որը գիտե գնահատել ու անհունորեն սիրել հելլեն դասականությունը և առաջնորդվել վերջինիս որդեգրած սկզբունքներով³: Հետաքրքիր է հեղինակի հելլենասիրությունը վկայակոչող Դավիթ Անհաղթ-Գրիգոր Մագիստրոս – Դանթե-Պետրարկա զուգահեռը, որ նրբախույզ դիտումի արդյունք պետք է նկատել (էջ 7):

Մովսես խորենացու հայրենասիրությունը որքան արդյունք է բարեպաշտ ու լայնահայաց քրիստոնեության և քրիստոնեական վարդապետության ճշմարիտ ընկալման, նույնքան հետևանք աշխարհիկ-հելլեն ըմբռնման, որ ներդաշնակ փոխառնչակցումի մեջ է նախորդի հետ: Սակայն, ինչպես նկատում է Չոպանյանը, եթե Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու երկերում քրիստոնեական գաղափարատության համար գերակշիռ տեղ է հատկացված, խորենացու աշխատության մեջ երկրորդն է գերակշռում՝ միահյուսված տիեզերական-համայնապարփակ ազգասիրության գաղափարի հետ (էջ 7) :

Գեղագետ Չոպանյանի համար խորենացին հայ տոհմիկ դպրության պատմության մեջ արձակ բանաստեղծության կամ, այսօր գիտական շրջանառության մեջ մտած, պատմագեղարվեստական⁴ ժանրի մեծագույն ներկայացուցիչն է. «խորենացի բա-

¹ Այս տեսակետը, որի արձագանքը լսում ենք Մ. Մկրյանի աշխատության մեջ (M.M.Мкрян, Мовсес Хоренаци, Е., 1969, с. 17), պետք է լրջորեն վիճարկվեր Գ.Մուրադյանի կողմից, ըստ որի Պիտոյից գրքի թարգմանիչն, ամենայն հավանականությամբ, 7-րդ դարի հեղինակ Մովսես Քերթոզն է. «Գիրք Պիտոյից», աշխտ. Գ.Մուրադյանի, Եր., 1993, նաև Книга Хрий, перевод с древнеармян., предисл. и коммент. Г.Мурадяна,Ер., 2000 :

² Ի դեպ, հատկանշականն այստեղ այն է, որ Չոպանյանի զարմանալիորեն ճշմարիտ և ակամայից արված բնութագծումը հետագայում՝ տասներեք տարի անց իր բանասիրական վավերացումն ունեցավ Երվ. Տեր-Մինասյանի «Մովսես խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը» ուսումնասիրության մեջ («Տեղեկագիր» ՍՍՀՄ Գիտ.Ակադեմիայի Հայկական ֆիլիալի, 1943, թիւ 2, էջ 55-80, նաև հեղինակի «Պատմաբանասիրական հետազոտություններ», Եր.,1971, էջ 209-242, 243-278), որ ուղղված էր Ստ. Մալխասյանցի «խորենացու առեղծվածի շուրջը» (Եր.,1940) աշխատության մեջ առաջադրված այն վիճելի դրույթի դեմ, թե խորենացին լինելով հելլենասեր, հարել էր քաղկեդոնականությանը), էջ 130-144/: Նույնը տես խորենացու «Պատմության» աշխարհաբար թարգմանության Ներածության մեջ (Եր., 1940, էջ 13-23):

³ Հմմտ.Мкрян, նշվ. աշխ., էջ 12, 65-66, 100:

⁴ Ի միջիայլոց այս եզրը գիտական շրջանառության մեջ է մտցրել գրականագետ Վ. Նալբանդյանը՝ ի մասնավորի շեշտելու համար 5-րդ դարի հայ պատմիչների երկերի քերթողական անուրանալի

նաստեղծ մըն է ամեն բանէ առաջ»: Եվ հետո ավելացնում. «Հայրենասէր բանաստեղծ մըն է, որ հղացած է ծրագիրը «Հայոց պատմութեան», «բանաստեղծը հոն կերեւայ. թէ՛ ծրագրին ամբողջութեան եւ թէ՛ անոր լաւագոյն մասերուն գրականօրէն սքանչելի գործադրութեան, զորէլ շարադրութեան, կուռ ոճին մէջ»: Ինչպէս կարելի է նկատել, Չոպանյանի համար ի շարս արձակի բանաստեղծական տարազը հատկորոշող բանարվեստային միավորների, որոնք հիմնականում գործի բանաստեղծականացման երաշխիքն են, կա նաև մի երկրորդ երաշխիք, նույն այդ բանաստեղծականության մեկ այլ արտահայտություն: Այն առկա է երկի ամբողջականությամբ պայմանավորված, բարոյագեղագիտական բնավորության և քաղաքական շեշտի մեջ:

Ուշագրավ են գրականագետի ազգային գեղեցիկ դպրության ներքին էությունը բնորոշող այն տողերը, որոնք կարելիի սահմաններում զատորոշում և ընդգծում են Քերթոզահոր հուժկու անհատականությունը, ինչպէս և հայ գրականության կարևորագոյն, հոգեշահ արտադրանքներից մեկի («Պատմութիւն») մեջ հույզի նկատմամբ մտքի գերակշռության, մասնահատկություն հայտաբերող իրողությունը (էջ 10), որտեղ այնուամենայնիվ այդ երկուսը ցցուն հակասության մեջ չեն: Այդ հակասությունը, եթէ այն իրապէս կա, ապա կա միայն բարոյագիտական զննումով երևան բերվող ներքին իրողության մեջ: Սրանով է բացատրվում «Պատմահայր-Քերթոզահայր» պատվանունների իմաստաբանական երկուստեքունը և միաժամանակ ինքնակայությունը, որ դարերի հոլովույթի մեջ ներծծվել, մերվել է մտքի հայ մշակների գիտակցության մեջ որպէս երկու գոյակից շնորհներ. «Խորենացին իր ամբողջ գործին մէջ մտածող բանաստեղծ մըն է, որոշ եւ լայն իմաստութեամբ մը տիրապետուած, տոգորուած այնքան հնուտ, որքան ներշնչեալ բանաստեղծ» (էջ 10): Ըստ Չոպանյանի, հենց Խորենացին է, որ «իր քնարերգական էջերէն ոմանց մէջ («Վարդավառի ճառ») նարեկացիական ոճին իսկ նկարագիծը արդէն տուած է» (անդ)¹: Իսկ հինգերորդ կետում Խորենացուն ներկայացնում է որպէս «մեր առաջին ֆոլկլորաբանը», որը գեղագետի հմտությամբ գեղեցիկ չափածո հատակտորներ է իր Պատմության մեջ գետեղում և նույնքան հմտությամբ դրանք արձակի վերածում: Ութերորդ կետը ամփոփված է հետևյալ մի քանի տողերում. «Իր ինքնայատուկ ոճը²՝ հոյակապօրէն զօրեղ ու ճոխ ջղուտ ու պերճ է միանգամայն, և զինք կը կացուցանէ հայ խօսքի մեծ արուեստագետներէն մին» (էջ 10): Իններորդ կետում Պատմահոր «Ողբը» դիտվում է որպէս երախայրիքը հայ հրապարակագրության, իսկ հեղինակը՝ «մեր առաջին մեծ հրապարակագիրը» (էջ 11)³, որի խոսքը աչքի է ընկնում եղբրականորէն վեհաշունչ մեծակերտությամբ (մոնումենտալիզմ): Ընդհանրացնող է և խոսուն տասներորդ կետում Խորենացուն, որպէս մարդ և կորովաբան մատենագիր ներկայացնող հատ-

արժանիքները (տես В.Налбандян, Египше, Ер., 1972, с. 40):

¹ Հմմտ. Պ.Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Եր., 1969, էջ 15:

² Հավանաբար նկատի ունի նամակային ոճը (style epistolaire), տրամախոսական եղանակը/monier dialog) և հռետորական պատկերավոր արտահայտությունները. այս մասին տես՝ Մ.Աբեղյան, Երկեր, հտ. Գ, Եր., 1968, էջ 321-322:

³ Խորենացի-հրապարակախոսը պատշաճորէն զնահատված է՝ Գ. Գ. Անանյան, Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, Եր., 2005, էջ 86-93, 95-97 :

վածը. «Ան վերջին ծայր ինքնատիպ, համակրելի տիպար մըն է: Խորագագ, անկեղծ, համարձակախօս, ճշմարտախօս, ջղային, դիւրագրգիռ, մերթ նոյնիսկ կրքոտ, բարկացկոտ, բայց խորապէս գեղասէր, ջերմօրէն հայրենասէր և ուսումնասէր, իր նախահայրերուն, ինչպէս և ժամանակակիցներուն թերութիւնները ձաղկող, կոնակը Արեւելքին՝ անոր մտայնութեան և մշակոյթին տուած (բացի իր սիրելի հայրենիքէն և նաև իր պաշտած Յիսուսին ծննդավայր Պաղեստինեան սուրբ երկրէն) աչքն ու միտքը գլխավորապէս սեւեռած հելլեն հին անզուգական մշակոյթին և աղեքսանդրեան նոր-հելլեն քրիստոնեական քաղաքակրթութեան, այսպէս է ահա այդ այնքան բարդ, կրակոտ, սրտի և մտքի գանձերով ծանրաբեռն ազնիւ, յստակ ու քաջ նկարագրով մեծ Յայր, որ իր գործերուն մէջէն իր սքանչելի մարդուն հոգին, հայ մշակոյթին աննման կերտիչի, հայ հայրենիքին վերականգնման ջերմեռանդ ու հեռատես գործիչի տիպարը մեզի կը պարզէ» (էջ 11):

Խորահայաց գեղագետի ճշմարտախօսյա հայացքի ներքո երևան բերվող արժանիքները մեզ համար առանձին կարևորություն ունեն, որովհետև մատնանիշ են անում ոչ միայն մասնահատուկ կողմերը մեծ Քերթողահոր վաստակի, այլև ընդհանրացնող լայնատեսությամբ, գեղագիտական ընդհանուր հայտարարի բերող նշմարով ի հայտ բերում բարոյական նկարագիրը այդ «մեծ Յայի»:

Յակոբ Քյոսեյան, Խորենացին Ա. Չոպանյանի գնահատմամբ – Հոդվածում ներկայացված են հայ մշակույթի նշանավոր ներկայացուցիչ Ա.Չոպանյանի (1872-1954) գեղագիտական, բարոյաբանական դիտումները, որոնցում գնահատված են Խորենացի գեղագետի ու մարդու բնութագրական գծերը: Խորենացի գրողի հիմնական գծերը՝ հելլենասիրությունն ու անվերապահ նվիրումը Ազգային եկեղեցուն առաջին հայացքից իրար բացառեն, ըստ Չոպանյանի փոխկապակցված են:

Акоп Кесеян, Хоренаци в оценке А. Чопаняна –

(1872-1954),

Hakob Kyoseyan, Khorenatsi as seen by A. Chopanyan – The article presents esthetical and ethical remarks by A. Chopanyan (1872-1954), a prominent representative of Armenian culture, in which he gives the appreciation of Khorenatsi’s characteristic peculiarities, as esthetician and human being. The main features of Khorenatsi as writer are his admiration for Hellenic culture and his indisputable devotion towards national Church. Though these two principles may seem incompatible at the first glance, A. Chopanyan thinks that they are interrelated.

Յակոբ Քյոսեյան – փիլիսոփայական գիտությունների դոկտոր

